Հուսիկ Արա

Վերջակետ

Քո գնալուց
կյանքը կանգ առավ ու մեռավ ամեն բան.
ես ինչպե՞ս ապրեմ, երբ երկիրն է ամայի:

Քո սկիզբն էի ես,
իմ վերջը եղար դու.
մենք միասին կարող էինք Աստված լինել՝
հաստատելով խոսքը նախախնամ.
թե՝ ես եմ սկիզբը և վերջը:

Երբ գնում ես,
քեզ հետ տանում ես ամենը, ինչ ես ունեմ,
իսկ քո գալով՝
իմն ես դարձնում այն, ինչ չեմ ունեցել:

Դու իմ վերջին աղոթքն էիր,
որ տեղ չհասավ.
ու ես սատանային եմ ծախում ինձ,
միայն թե լսվի աղոթքս,
որ երաշխիքն է իմ ապրելու:
Իմ խաղն էիր վերջին անգամ.
վստահեցի ինչ մնացել էր կյանքից
և ապրելու արդեն կիսված օրս վրիպեցի:

Դու քեզ հետ տարար ամբողջը՝
երազ ու իրականություն:
Անձրևաջրի կաթիլների հետ,
աշնան վերջին գիշերվա մեջ,
ագռավն է թաց-թաց կռում.
- Նա չէր, ում կանչեցիր նրա անունով:
Ու ես գնում եմ մի քիչ հեռու այս անգամ.
կոպերիս տակ ունեմ հիմա ո՛չ մի երկինք քեզ համար:

Մեկ անգամ էլ գարունդ լինեմ.
նորաբաց վարդը ննջարանդ բերեմ ամեն առավոտ
ու լուսաբացի սերս շաղ տամ մահճակալիդ շուրջը.
օդում փոշեհատիկը հավաքեմ շուրթերով
և անխառն բուրմունքդ պահեմ թոքերիս մեջ:
Տաք օրերս մեկ-մեկ ամեն քայլիդ առաջ փռեմ,
երբ մանրասահ իջնես պարտեզ՝ հայացքս տրորելով.
կյանքս վատնեմ քեզ համար շռայլորեն ու անխնա:

Դու իմ բանաստեղծությունն ես,
որ կարող եմ այսպես պատմել երկար,
բայց երբեք չգրել այստեղ.
այնպես չեմ ուզում դնել վերջակետ: